ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 03.09.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 15-ը (տասնհինգը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական,
4. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
7. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
8. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
9. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
12. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
13. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
14. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
15. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. **«Կրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին » ՀՀ օրենքի՝ ուսման վարձավճարի ամսական վճարման և ամսական նվազագույն վարձավճարի չափի որոշման նոր կարգի մասին**

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

2. 2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 3-րդ կուրսի պրակտիկաներին չմասնակցած ուսանողների կրկնակի պրակտիկայի անցկացման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

3. 2019-2020 ուսումնական տարում բակալավրի կրթական ծրագրի բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

4. Ֆակուլտետային խորհրդի օրինակելի աշխատանքային պլանի քննարկման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1. ԼՍԵՑԻՆ՝

«Կրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին » ՀՀ օրենքի՝ ուսման վարձավճարի ամսական վճարման և ամսական նվազագույն վարձավճարի չափի որոշման նոր կարգի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները և ղեկավարվելով «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 127 -րդ կետի 1-ին ենթակետով՝ ներդնել ուսման վարձավճարի ամսական վճարման կարգը

1. ՇՊՀ վճարովի հիմունքներով սովորող ուսանողները ուսման վարձը կարող են վճարել ըստ կիսամյակների կամ ուսումնական տարվա ամիսների:
Ըստ ուսումնական տարվա ամիսների վարձավճարի վճարումը իրականացվում է ուսանողի կողմից դիմումի ներկայացման հիման վրա:
Ամսական վճարի նվազագույն չափը.

ա) Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման I-III և մագիստրոսական կրթական ծրագրով I կուրսերում սահմանվում է տարեկան սահմանված վարձավճարի 1/10-ի չափով:
բ) Ավարտական կուրսերում (բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման IV, հեռակա ուսուցման V, մագիստրոսական կրթական ծրագրով II) սահմանվում է տարեկան սահմանված վարձավճարի 1/9-ի չափով:
գ) Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար սահմանվում է տարեկան սահմանված վարձավճարի 1/8-ի չափով:
2. Ուսանողները պետք է ընթացիկ ամսվա համար սահմանված ուսման վարձավճարի համապատասխան մասը վճարեն ՇՊՀ բանկային հաշվեհամարին մինչև տվյալ ամսվա 10-ը: Տվյալ ամսվա համար սահմանված չափով կամ նախատեսված ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել ՇՊՀ-ից:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 3-րդ կուրսի պրակտիկաներին չմասնակցած ուսանողների կրկնակի պրակտիկայի անցկացման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց վերոգրյալ հարցի կապակցությամբ համապատասխան ցուցակ (կցված է) և նշեց, որ ռեկտորատի անդամներից ակնկալում է աջակցություն ցուցաբերել պրակտիկաներին չներկայացած ուսանողների նկատմամբ՝ թույլ տալով նրանց մասնակցելու բուհի կողմից կազմակերպած կրկնակի պրակտիկային:

2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի պրակտիկաներին չներկայացած ուսանողներ

Աղյուսակ 1

N	Ֆակուլտետ	Մասնագիտություն, կուրս	Ուսանողի ԱԱՀ	Պրակտիկայի վայր
Մանկավարժական և արտադրական պրակտիկա				
1	Բնագիտամաթեմատիկական	ԻԿՄ 3-րդ	Կնյազյան Տելման Արմենի	Գյումրու Տեղ. տեխն. կենտրոն
2	Բնագիտամաթեմատիկական	ԻԿՄ 3-րդ	Ղայթանջյան Ռաֆայել Արտակի	Գյումրու Տեղ. տեխն. կենտրոն
3	Բնագիտամաթեմատիկական	Տեղեկատվ. տեխնոլոգ. 3-րդ	Խաչատրյան Կարեն Արամի	Գյումրու Տեղ. տեխն. կենտրոն
4	Մանկավարժության	Ֆիզ. կուլտ. և սպորտ	Ուռուշանյան	ՇՊՀ ավագ

		3-րդ	Սերյոժա Սարգսի	դպրոց
5	Մանկավարժության	Ֆիզ. կուլտ. և սպորտ 3-րդ	Սարգսյան Հենրիկ Կամոյի	ՇՊՀ ավգա դպրոց
6	Ռազմական	ՆԶՊ 3-րդ	Եղոյան Դավիթ Հովհաննեսի	ՇՊՀ ավգա դպրոց
	Պլեներային պրակտիկա			
7	Հում. գիտ. և արվեստի	Դեկ. կիր. արվեստ 3-րդ	Փիրոյան Լադիկ Գեղամի	ՇՊՀ այգի
8	Հում. գիտ. և արվեստի	Դեկ. կիր. արվեստ 3-րդ	Առաքելյան Դավիթ Սասունի	ՇՊՀ այգի

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 1.Հաստատել 2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 3-րդ կուրսերի ուսանողների կրկնակի պրակտիկայի անցկացման վայրերը և ժամանակացույցը:

2. Մանկավարժական և արտադրական պրակտիկաների (աղյուսակ 1-ի՝ 1-6 այունակներ) անցկացման ժամանակահատվածը սահմանել ս/թ.-ի սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, իսկ պլեներային պրակտիկայինը՝ (աղյուսակ 1-ի՝ 7-8 այունակներ)՝ սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

15 անդամ. կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուսումնական տարում բակալավրի կրթական ծրագրի բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման մասին

Ռեկտորի ԺՊ պարոն Սերոբյանը ներկայացրեց,որ բակալավրի կրթական ծրագրով ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցների հաշվին յուրաքանչյուր տարի նախարարի հրամանով հաստատվում է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման ենթակա մասնագիտությունների և տեղերի ցանկը:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով «Կրթության մասին »ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 23.08.2019թ. թիվ 02/06.2/17462-19 գրությամբ հաստատված մասնագիտությունների և տեղերի համաձայն՝ համապատասխան մասնագիտությամբ ամենաբարձր միավորներով (ամփոփաթերթերը՝ կից) համալսարանի վճարովի համակարգ ընդունված ներքոհիշյալ ուսանողների 2019-2020 ուստարվա վարձավճարը լրիվ փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Կրթության մասին »ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 23.08.2019թ. թիվ 02/06.2/17462-19 գրությամբ հաստատված մասնագիտությունների և տեղերի համաձայն՝ համապատասխան մասնագիտությամբ ամենաբարձր միավորներով (ամփոփաթերթերը՝ կից) համալսարանի վճարովի համակարգ ընդունված ներքոգրյալ ուսանողների 2019-2020 ուստարվա վարձավճարը լրիվ փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին:

2019/2020 ուսումնական տարվա բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման ենթակա ուսանողների անվանացանկն ըստ մասնագիտությունների և տեղերի

Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը, *Կրթական ծրագիրը*	*Ազգանուն, անուն,հայրանուն*
1	2	*3*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**	
	011401.01.6 Կենսաբանություն	*Մաթևոսյան Մարիաննա Գևորգի*

	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	*Ադամյան Սյուզաննա Վաղարշակի*
023201.00.6	**Լեզվաբանություն**	
	023201.01.6 Թարգմանչական գործ /անգլերեն և հայերեն/	*Պետրոսյան Ջուլիետա Տիգրանի*
031301.00.6	**Հոգեբանություն**	
	031301.01.6 Հոգեբանություն	*Սարգսյան Անի Վարդանի*
031401.00.6	**Սոցիոլոգիա**	
	031401.01.6 Սոցիոլոգիա	*Բեժանյան Ալևտինա Ալբերտի*
054201.00.6	**Աշխարհագրություն**	
	054201.02.6 Քարտեզագրություն և կադաստրային գործ	*Դարբինյան Ռոզա Երեմի*

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

15 անդամ. կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետային խորհրդի օրինակելի աշխատանքային պլանի քննարկման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ֆակուլտետային խորհրդի օրինակելի աշխատանքային պլանը կազմվել է ֆակուլտետի կանոնադրության հիման վրա: Տիկին Ավետիսյանը նշեց, որ աշխատանքային պլանում ֆակուլտետների գործունեության հետ կապված գործառույթներն են ամրագրված ամիս առ ամիս, քանի որ բուհը գնում է հավատարմագրման դրա հետ կապված դրվել է նաև ֆակուլտետի որակի պատասխանատուի հաշվետվություն, որի անհրաժեշտությունը ուսումնական տարվա վերջին անպայման կլինի: Այնուհետև տիկին Ավետիսյանը ավելացրեց, որ պլանը կոչվում է օրինակելի, քանի որ բոլոր ֆակուլտետների համար կան միտեսակ գործառույթներ ու միևնույն ժամանակամիջոցում դրանց իրականացում, սակայն յուրաքանչյուր ֆակուլտետ իր առանձնահատկություններից դուրս գալով կարող է պլանում ավելացնել իր գործառույթների սահմանները:
Պարոն Սերոբյանի կարծիքով ցանկալի էր, որպեսզի այս փաստաթղթին արդեն ծանոթացած լինեյին ռեկտորոտի անդամները, այսինքն նախորոք ուղարկված լիներ նրանց և հիմա արդեն դիտարկումներ կատարվեր:

Տիկին Ավետիսյանը պատասխանեց, որ այն կազմվել է իր ձևակերպմամբ «էքսրեմալ պայմաններում» և պարոն Սերոբյանն էլ գիտի այդ մասին:

Պարոն Սերոբյանը հաստատեց, որ կապված բուհում ստուգումների հետ, ամբողջ շաբաթ մեծ ծավալով ու լարված են աշխատել և բուհում բոլոր աշխատողներին է սա հայտնի:
Ա. Սարգսյանը հաստատեց պարոն Սերոբյանի ասածը և նշեց, որ ինքն էլ է համաձայն նախօրոք ծանոթանալով պլանին կարող են առաջարկություններ և դիտարկումներ լինել:
Տիկին Ավետիսյանն առաջարկեց, որպեսզի փաստաթուղթը տեղադրվի համալսարանի ցանցում, ֆակուլտետներում այն քննարկվի, ապա հաստատվի ֆակուլտետային խորհուրդների կողմից:
Պարոն Սերոբյանն առաջարկեց, ռեկտորատումոյն քննարկել և որպես օրինակելի պլան՝ ֆակուլտետներում այս պլանի օրինակով աշխատել: Այնուհետև հարցը պարոն Սերոբյանի կողմից դրվեց քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ֆակուլտետների գործառույթները կազմակերպել և աշխատանքներն իրականացնել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից ներկայացված ֆակուլտետային խորհրդի օրինակելի աշխատանքային պլանի հիման վրա (կցված է արձանագրությանը):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

15 անդամ. կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.նիրավ.ապահովման բաժնի վարիչ՝ Ա. Հովհաննիսյան